« 30 » ապրիլ 2024թ. No 2447 - Ա

«ՀԱՍՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՍ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԹԻՄԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԽՈՐԱՑՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑ ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2024թ. մայիսի 7-8-ը, շարունակաբար, ք. Երևան (Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոն՝ Մարգարյան 6/2)

«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ,

Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիա,

«Լոս Անջելեսի մանկական հիվանդանոց»

- Գրություն՝ 13-14, 25-26. 02
- Թիրախային լսարան՝ նեոնատոլոգներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, մանկական բուժքույրեր, մանկաբարձուհիներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ յուրաքանչյուր խմբում 1-5 հոգի
- մասնակից ավագ բուժաշխատողներին շնորհել ՇՄԶ 5 տեսական և 5 գործնական կրեդիտ.

  մասնակից միջին բուժաշխատողներին՝ ՇՄԶ 4 տեսական և 4 գործնական կրեդիտ.

  դասընթացավարներ Տաթևիկ Ավանեսյանին՝ ՇՄԶ 5 տեսական և 5 գործնական կրեդիտ, Գոհար Ղարիբյանին՝ ՇՄԶ 5 տեսական և 5 գործնական կրեդիտ, Լուսինե Վարդապետյանին՝ ՇՄԶ 5 տեսական և 5 գործնական կրեդիտ, Կորյուն Կարագուլյանին՝ ՇՄԶ 5 տեսական և 5 գործնական կրեդիտ
- Կոնտակտ press.aecp@gmail.com

Օր 1		
12:00-12:30	Մասնակիցների գրանցում	
12:30-13:30	**Արհեստական շնչառություն դիմակով և պարկով**	
12:30-12:50	**Դասախոսություն** Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերն են. արհեստական շնչառության իրականացման համար անհրաժեշտ պարագաները, արհեստական շնչառության իրականացման ցուցումները անհաս և հասուն նորածինների պարագայում, արհեստական շնչառության իրականացման տեխնիկան, անհաս նորածինների օքսիգենոթերապիայի առանձնահատկությունները, ռեսպիրատոր աջակցումը, անձնակազմի դիրքավորումը և նորածնի դիրքը ջերմային տաքացուցիչի տակ, գլխի և պարանոցի դիրքը շնչուղիները բաց պահելու համար,	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան

	դիմակների չափերը և ձևերը, ճիշտ չափի ընտրությունը և ճիշտ տեղադրումը, արհեստական շնչառության իրականացման տարբեր մոտեցումներ՝ ամբուի պարկի, անեսթեզիոլոգիական պարկի, T-աձև համակարգի միջոցով, արհեստական շնչառության արդյունավետության գնահատում:	
12:50-13:30	**Գործնական աշխատանք** Մուլյաժի վրա իրականացվող գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները կտիրապետեն՝ արհեստական շնչառության իրականացման համար անհրաժեշտ պարագաների սարքինության գնահատմանը, արհեստական շնչառության իրականացման ցուցումների գնահատմանը, ճիշտ դիրքավորմանը, ջերմային տաքացուցիչի տակ նորածնի ճիշտ դիրքին, շնչուղիները բաց պահելու համար գլխի և պարանոցի ճիշտ դիրքին, դիմակների ճիշտ չափի և ձևի ընտրությանը և ճիշտ տեղադրմանը, արհեստական շնչառության իրականացման տարբեր մոտեցումներին՝ ամբուի պարկի, անեսթեզիոլոգիական պարկի, T-աձև համակարգի միջոցով, արհեստական շնչառության արդյունավետության գնահատմանը:	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
13:30-14:30	**Կոկորդային դիմակի կիրառում (i-gel)**	
13:30-13:50	**Դասախոսություն** Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերն են՝ i-gel կոկորդային դիմակի կառուցվածքը, i-gel կոկորդային դիմակի առավելությունները ինտուբացիայի նկատմամբ, i-gel կոկորդային դիմակի չափսի ընտրությունը՝ կախված երեխայի տարիքից և քաշից, իրավիճակները, երբ լարինգեալ դիմակ է օգտագործվում, լարինգեալ դիմակի կիրառման սահմանափակումները, լարինգեալ դիմակի տեղադրման տեխնիկան և ֆիքսումը: Ե՞րբ պետք է հանել լարինգեալ դիմակը	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
13:50-14:30	**Գործնական աշխատանք** Մուլյաժի վրա իրականացվող գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները կտիրապետեն՝ i-gel կոկորդային դիմակի չափսի ընտրությանը կախված երեխայի տարիքից և քաշից, իրավիճակների գնահատմանը, երբ պետք է լարինգեալ դիմակ օգտագործել, լարինգեալ դիմակի տեղադրման և ֆիքսման տեխնիկային, լարինգեալ դիմակի հանման տեխնիկային	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
14:30-15:30	**Ինտուբացիա**	
14:30-14:50	**Դասախոսություն** Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերն են. ինտուբացիայի համար անհրաժեշտ պարագաները, ինտուբացիայի ցուցումները, ինտուբացիայի իրականացման անատոմիական կողմնորոշումները, ինտուբացիոն խողովակի չափսի ընտրությունը՝ կախված նորածնի գեստացիոն տարիքից և քաշից, ինտուբացիայի իրականացման քայլերի հաջորդականությունը և տեխնիկան, հաջող ինտուբացիայի նշանները, էքստուբացիայի ցուցումները և տեխնիկան	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան

14:50-15:30	**Գործնական աշխատանք** Մուլյաժի վրա իրականացվող գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները կտիրապետեն՝ ինտուբացիայի համար անհրաժեշտ պարագաների առկայության և սարքինության ստուգմանը, ինտուբացիայի ցուցումների գնահատմանը, ինտուբացիայի իրականացման անատոմիական կողմնորոշումների ճիշտ վիզուալիզացիային, ինտուբացիոն խողովակի չափսի ընտրությանը՝ կախված նորածնի գեստացիոն տարիքից և քաշից, ինտուբացիայի իրականացման քայլերի հաջորդականությանը և տեխնիկային, հաջող ինտուբացիայի նշանների գնահատմանը, էքստուբացիայի ցուցումների գնահատմանը և տեխնիկային	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
15:30-16:00	Ընդմիջում	
16:00-17:00	**Սրտի անուղղակի մերսում**	
16:00-16:20	**Դասախոսություն** Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերն են՝ սրտի անուղղակի մերսման ցուցումները, սրտի անուղղակի մերսման ժամանակ անձնակազմի դիրքավորումը և նորածնի դիրքը ջերմային տաքացուցիչի տակ, սրտի անուղղակի մերսման տեխնիկան, սրտի անուղղակի մերսման հաճախության և արհեստական շնչառության զուգակցումը, սրտի անուղղակի մերսման դադարեցման ցուցումները	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
16:20-17:00	**Գործնական աշխատանք** Մուլյաժի վրա իրականացվող գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները կտիրապետեն՝ սրտի անուղղակի մերսման ցուցումների գնահատմանը, սրտի անուղղակի մերսման ժամանակ անձնակազմի դիրքավորումը և նորածնի դիրքը ջերմային տաքացուցիչի տակ, սրտի անուղղակի մերսման տեխնիկան, սրտի անուղղակի մերսման հաճախության և արհեստական շնչառության զուգակցումը, սրտի անուղղակի մերսման դադարեցման ցուցումները	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
17:00-17:30	**Ստամոքսային զոնդի տեղադրում**	
17:00-17:10	**Դասախոսություն** Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերն են՝ ստամոքսային զոնդի տեղադրման ցուցումները, ստամոքսային զոնդի տեղադրման համար անհրաժեշտ պարագաները, ստամոքսային զոնդի տեղադրման տեխնիկան, ստամոքսային զոնդի հանման ցուցումները, ստամոքսային զոնդի հանման տեխնիկան	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
17:10-17:30	**Գործնական աշխատանք** Մուլյաժի վրա իրականացվող գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները կտիրապետեն՝ ստամոքսային զոնդի տեղադրման ցուցումների գնահատմանը, ստամոքսային զոնդի տեղադրման տեխնիկային, ստամոքսային զոնդի հանման ցուցումների գնահատմանը, ստամոքսային զոնդի հանման տեխնիկային	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
17:30-18:00	**Պորտային երակի կաթետերիզացիա**	

17:30-17:40	**Դասախոսություն** Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերն են՝ պորտային երակի կաթետերիզացիայի ցուցումները, պորտային երակի կաթետերիզացիայի համար անհրաժեշտ պարագաները, պորտային երակի կաթետերիզացիայի տեխնիկան, պորտային երակի հաջող կաթետերիզացիայի նշանները, պորտային երակի կաթետերիզացիայից հետո երակ ներմուծվող դեղորայք, պորտային երակի կաթետերի հանման ցուցումները, պորտային երակի կաթետերի հանման տեխնիկան, անհաս նորածինների վերակենդանացումից հետո անհրաժեշտ նախազգուշական հատուկ միջոցառումներ	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
17:40-18:00	**Գործնական աշխատանք** Մուլյաժի վրա իրականացվող գործնական դասընթացի ընթացքում մասնակիցները կտիրապետեն՝ պորտային երակի կաթետերիզացիայի ցուցումների գնահատմանը, պորտային երակի կաթետերիզացիայի տեխնիկային, պորտային երակի հաջող կաթետերիզացիայի նշանների գնահատմանը, պորտային երակի կաթետերիզացիայից հետո դեքորայքի հավաքման և ներմուծման տեխնիկային, պորտային երակի կաթետերի հանման ցուցումների գնահատմանը, պորտային երակի կաթետերի հանման տեխնիկային	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
Օր 2		
12:00-12:10	Մասնակիցների գրանցում	
12:10-12:30	Նորածինների առաջնային վերակենդանացման ալգորիթմի քննարկում՝ հիմնված 1-ին օրը ձեռք բերված տեսական գիտելիքների վրա	
12:30-13:30	**Նորածնի առաջնային վերակենդանացում դիմակով և պարկով արհեստական շնչառության իրականացմամբ**	
12:30-12:50	**Գործնական աշխատանք** Գործնական դասընթաց սիմուլյացիոն սենյակում, սիմուլյացիոն տիկնիկի վրա. Մասնակիցները բաժանվում են երկու թիմի, որոնցից մեկը սիմուլյացիոն սենյակում նախապես մշակված սցենարներով իրականացնում է դիմակով և պարկով արհեստական շնչառության միջոցով նորածնի առաջնային վերակենդանացում, կիրառելով առաջնային վերակենդանացման ալգորիթմը: Այդ ընթացքում երկրորդ թիմը քննարկման սենյակում մեծ մոնիտորով հետևում է առաջին թիմի աշխատանքին: Այնուհետև թիմերը փոխվում են տեղերով: Վերակենդանացման ընթացքը, հետագա քննարկման նպատակով տեսաձայնագրվում է	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
12:50-13:30	Քննարկում Վերապատրաստողներն ու մասնակիցները քննարկման սենյակում, դիտելով վերակենդանացման տեսաձայնագրությունը, վերլուծում են դիմակով և պարկով արհեստական շնչառության միջոցով նորածնի առաջնային վերակենդանացման ընթացքում թույլ տրված հնարավոր բացթողումներն ու սխալները, ինչպես նաև	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան

	դրանց պատճառները, կատարվում են համապատասխան ուղղումներ	
13:30-14:30	**Նորածնի առաջնային վերակենդանացում ինտուբացիայով**	
13:30-13:50	**Գործնական աշխատանք** Գործնական դասընթաց սիմուլյացիոն սենյակում, սիմուլյացիոն տիկնիկի վրա. Մասնակիցները, բաժանվում են երկու թիմի, որոնցից մեկը սիմուլյացիոն սենյակում նախապես մշակված սցենարներով իրականացնում է նորածնի առաջնային վերակենդանացում ինտուբացիայի միջոցով՝ կիրառելով առաջնային վերակենդանացման ալգորիթմը: Այդ ընթացքում երկրորդ թիմը քննարկման սենյակում մեծ մոնիտորով հետևում է առաջին թիմի աշխատանքին: Այնուհետև թիմերը փոխվում են տեղերով: Վերակենդանացման ընթացքը, հետագա քննարկման նպատակով տեսաձայնագրվում է	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
13:50-14:30	Քննարկում. Վերապատրաստողներն ու մասնակիցները քննարկման սենյակում դիտելով վերակենդանացման տեսաձայնագրությունը՝ վերլուծում են ինտուբացիայի միջոցով նորածնի առաջնային վերակենդանացման ընթացքում թույլ տրված հնարավոր բացթողումներն ու սխալները, ինչպես նաև դրանց պատճառները, կատարվում են համապատասխան ուղղումներ	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
14:30-15:00	Ընդմիջում	
15:00-16:30	**Նորածնի առաջնային վերակենդանացում սրտի անուղղակի մերսման և արհեստական շնչառության զուգակցմամբ**	
15:00-15:30	**Գործնական աշխատանք** Գործնական դասընթաց սիմուլյացիոն սենյակում, սիմուլյացիոն տիկնիկի վրա. Մասնակիցները, բաժանվում են երկու թիմի, որոնցից մեկը սիմուլյացիոն սենյակում նախապես մշակված սցենարներով իրականացնում է սրտի անուղղակի մերսման և արհեստական շնչառության զուգակցմամբ նորածնի առաջնային վերակենդանացում՝ կիրառելով առաջնային վերակենդանացման ալգորիթմը: Այդ ընթացքում երկրորդ թիմը քննարկման սենյակում մեծ մոնիտորով հետևում է առաջին թիմի աշխատանքին: Այնուհետև թիմերը փոխվում են տեղերով: Վերակենդանացման ընթացքը հետագա քննարկման նպատակով տեսաձայնագրվում է	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
15:30-16:30	Քննարկում. Վերապատրաստողներն ու մասնակիցները քննարկման սենյակում դիտելով վերակենդանացման տեսաձայնագրությունը՝ վերլուծում են սրտի անուղղակի մերսման և արհեստական շնչառության զուգակցմամբ նորածնի առաջնային վերակենդանացման ընթացքում թույլ տրված հնարավոր բացթողումներն ու սխալները, ինչպես նաև դրանց պատճառները, կատարվում են համապատասխան ուղղումներ	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան

16:30-18:00	**Նորածնի առաջնային վերակենդանացում ալգորիթմի ամբողջական կիրառմամբ՝ ներառյալ դեղորայքի ներմուծումը**	
16:30-17:00	**Գործնական աշխատանք** Գործնական դասընթաց սիմուլյացիոն սենյակում, սիմուլյացիոն տիկնիկի վրա. Մասնակիցները բաժանվում են երկու թիմի, որոնցից մեկը սիմուլյացիոն սենյակում նախապես մշակված սցենարներով իրականացնում է նորածնի առաջնային վերակենդանացում ալգորիթմի ամբողջական կիրառմամբ՝ ներառյալ դեղորայքի ներմուծումը: Այդ ընթացքում երկրորդ թիմը քննարկման սենյակում մեծ մոնիտորով հետևում է առաջին թիմի աշխատանքին: Այնուհետև թիմերը փոխվում են տեղերով: Վերակենդանացման ընթացքը հետագա քննարկման նպատակով տեսաձայնագրվում է	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
17:00-18:00	Քննարկում. Վերապատրաստողներն ու մասնակիցները քննարկման սենյակում դիտելով վերակենդանացման տեսաձայնագրությունը, վերլուծում են ալգորիթմի ամբողջական կիրառումը՝ ներառյալ դեղորայքի ներմուծումը, նորածնի առաջնային վերակենդանացման ընթացքում թույլ տրված հնարավոր բացթողումներն ու սխալները, ինչպես նաև դրանց պատճառները, կատարվում են համապատասխան ուղղումներ	Տաթևիկ Ավանեսյան/ Գոհար Ղարիբյան/ Լուսինե Վարդապետյան/ Կորյուն Կարագուլյան
18:00-18:15	<u>Ամփոփում</u>	